



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

04/10/2022

ՈՐՈՇՈՒՄ N 119-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ՊԱՅԱՆՁՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.1-րդ կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Սահմանել տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունների իրականացման թույլատրելի վայրերը, պահանջներն ու պայմանները.

1. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունները թույլատրվում է իրականացնել Գորիս քաղաքի և գյուղական բնակավայրերի հրապարակներում, մարզադաշտերում և քաղաքային զբոսավայրերում.

2. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունները իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված չափորոշիչներին համապատասխան, ապահովելով կատարողների /օգտագործողների/ համապատասխան որակավորման, գիտելիքների և հմտությունների պահանջը և /կամ/ տեխնիկական սարքավորումների պայմանները:

Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԱՌՈՒՇ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄՅԵՐ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԻ

ԴԻԱԼԱՂՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ

ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈՒԲՅԱՆ ՄԱՐԻՆԵ

ՀՈԿՍԵՓՅԱՆ ՄԵՆՈՒԱ

ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒԴԻ

ՏՈՌՈՂՅԱՆ ԱՐՏԱԿ

ՕՐԱՆՁԱՆՅԱՆ ԳԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2022թ. հոկտեմբեր « 05 »
ք. Գորիս